



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



**AFIC**


**COUNTERPART**  
INTERNATIONAL



# ԳՈՐԾԱՐԱՐԻ ՉԱՅՆ

Նոյեմբեր-2011

Իրադարձություններ/Նորություններ/Հայտարարություններ /Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ  
**ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ** **ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



## «Գործարար շահերի պաշտպանության ցանցը» համալրվեց նոր անդամներով

Ս.թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Գործարար շահերի պաշտպանության ցանցի» հզորացման և ընդլայնման ծրագրի շրջանակներում Երևանում և մարզերում կայացած հանդիպումների արդյունքում Ցանցը համալրվեց նոր անդամներով: «Բենեֆիտ» ՍՊԸ-ն և Շիրակի մրցունակության կենտրոն հիմնադրամը ստորագրել են «Գործարար շահերի պաշտպանության ցանցի»-ին միանալու հուշագիրը:

## Տեղի ունեցավ ՓՄՉ զարգացման խորհրդի երկրորդ նիստը

Նոյեմբերի 2-ին կայացավ ՀՀ Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի երկրորդ նիստը ՀՀ Վարչապետի նախագահությամբ, որտեղ ՀՀ Վարչապետը ներկայացրեց հարկային նոր փաթեթը:

Խորհրդի քարտուղարության ղեկավար՝ ՀՀ Էկոնոմկայի առաջին փոխնախարար տիկ. Կ. Մինասյանը զեկուցեց օրակագում գտնվող այն հարցերի մասին, որոնք նախորդ նիստից հետո ընկած ժամանակահատվածում լուծում են ստացել: Խորհրդի նիստից հետո Գործարար շահերի պաշտպանության ցանցի համակարգող Գ. Պողոսյանը մասնակցեց մառմուլի ասուլիսին, ներկայացնելով խորհրդի աշխատանքները և մասնավոր հատվածի կողմից առաջ քաշված հարցերը և պատասխանեց լրագրողների հարցերին:



*Գործարար շահերի պաշտպանության ցանցը համալրվեց նոր անդամներով*

*Տեղի ունեցավ ՓՄՉ զարգացման խորհրդի երկրորդ նիստը*

*Պոզնանում ընթանում է Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովը*

*Հայաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունեց մի շարք հարկային օրինագծեր*

*Փոքր բիզնեսի «մեծ աջակցությունը»*

*Տիգրան Սարգսյանը եւ Քեթրին Էշթոնն արձանագրել են, որ ՀՀ-ԵՄ հարաբերությունները մտել են զարգացման նոր փուլ*

*Արդյունաբերության զարգացման նոր ծրագիրը պետք է ժամանակին ներկայացվի հասարակությանը. Վարչապետ*

*Հուշում ՊԵԿ ղեկավարին. Հասարակական տրանսպորտի կեսը ստվերում է*

*«Մեր ձայնը լսելի է դարձել». Գործարարները համագումար են անում*

*Հարկային բեռը տեղափոխվել է բարձր եկամուտներ ունեցող ոլորտներ*

*Ի՞նչ հարկային փոփոխություններ են սպասվում հաջորդ տարի. ներկայացնում է վարչապետը*





Լեհաստանի Պոզնան քաղաքում 2011թ. նոյեմբերի 28-30-ը ընթանում է «Գործընկերություն հանուն ժողովրդավարական բարեփոխումների և եվրոպական ինտեգրման» խորագրով Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության համաժողովի (ԱԳ ՔՀՀ) երրորդ ամենամյա ընդհանուր ժողովը: Համաժողովը մեկտեղելու է Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Մոլդովայի և Ուկրաինայի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ շուրջ 300 մասնակիցների և հյուրերի: Ենթադրյալ հագեցած օրակարգով մասնակիցները քննարկելու են Արեւելյան գործընկերության մեջ քաղաքացիական հասարակության ներգրավմանը վերաբերող տարբեր խնդիրներ և ԱԳ ՔՀՀ զարգացման հեռանկարները:

ԱԳ ՔՀՀ-ն ստեղծվել է 2009 թվականին, Արեւելյան գործընկերության Պրահայի գագաթաժողովից հետո: ԱԳ ՔՀՀ գործունեությունը նպատակաուղղված է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացմանն աջակցելուն և դրանց միջև կապերի ընդլայնմանը, ինչպես նաև իշխանության պետական մարմինների հետ նրանց երկխոսության ապահովմանը: ԱԳ ՔՀՀ 1-ին հանդիպումը տեղի է ունեցել 2009թ. նոյեմբերի 16-17-ին, Բրյուսելում, իսկ երկրորդը՝ 2010թ. նոյեմբերի 18-19-ին, Բեռլինում:

ԱԳ ՔՀՀ երրորդ ամենամյա հանդիպումը ընդլայնված ձևաչափ ունի (նախկին 1.5 օրվա փոխարեն՝ 3 օր), ինչը հնարավոր է դարձել Եվրոպական հանձնաժողովի և Լեհաստանի արտգործնախարարության Արտաքին կապերի եվրոպական ծառայության աջակցության շնորհիվ:

Համաժողովը հագեցած օրակարգ ունի և ներառում է տարբեր բաղկացուցիչներ՝ ընդհանուր ժողովներ, բանավեճեր, աշխատանքային խմբերի նիստեր, զուգահեռ ընթացող միջոցառումներ և Համաժողովի ռազմավարական հայեցակարգի, ինչպես նաև Համաժողովը որպես իրավաբանական անձ գրանցելու վերաբերյալ քննարկումներ:

Եվրամիության ընդլայնման և հարեանության քաղաքականության գծով գերագույն հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի ելույթով կսկսվի «Արեւելյան գործընկերության մեջ քաղաքացիական հասարակության ներգրավման նոր ռազմավարության ճանապարհին» խորագրով առաջին քննարկումը:

Լեհաստանի արտաքին գործերի նախարար Ռադոսլավ Միկոլայիկին հանդես կգա «Քաղաքացիական հասարակության համաժողովի երկու տարին Արեւելյան գործընկերության շրջանակներում» ելույթով և կհանձնի Արեւելյան գործընկերության լրագրողական մրցանակը՝ ժողովրդավարության, մարդու իրավունքների, իշխանության չարաշահման և Եվրամիության հարցերով լավագույն հրապարակումների համար:

*Eastern Partnership Newsletter Armenia/issue79*  
29.11.2011

### Հայաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունեց մի շարք հարկային օրինագծեր

Հայաստանի խորհրդարանը, նոյեմբերի 28-ին, առաջին ընթերցմամբ ընդունել է մի շարք հարկային օրինագծեր: Մասնավորապես, ակցիզային հարկի մասին օրինագծում ավելացվել են ալկոհոլային խմիչքների տոկոսադրույքները: Սպիրտային խմիչքների համար միացյալ դրույք է սահմանվել՝ 50 տոկոսի չափով (բայց ոչ պակաս, քան 500 դրամ մեկ լիտրի համար): Ավելացվել են դրույքները նաև ակցիզավորման ենթակա մյուս ապրանքների համար: Բացի այդ, վերացվել է տեղական և ներմուծվող ալկոհոլի նվազագույն ակցիզային շեմի դիֆերենցիալը:

Ինչպես նշվում է օրինագծի հիմնավորման մեջ, միասնականացումը բխում է ԱՀԿ-ի, ԵՄ-ի և ԱՊՀ-ի գործընկերների առջև Հայաստանի ստանձնած պարտավորություններից: Մասնավորապես, զարեջրին ավելացվել է 30 տոկոս նվազագույն ակցիզ, իսկ գինին մնացել է 10 տոկոսի սահմաններում:

«Հաստատագրված վճարների մասին» օրենքի համաձայն ավելացվել են կազինոների գումարները՝ Երեւանից դուրս գտնվող կազինոների համար՝ 4,5 միլիոնից 6 մլն-ի: Լոտոների, բինգոների և այլ ավտոմատ մեխանիկական խաղերի համար համաթիվը 15 հազարից դարձել է 25 հազար (համաթիվը բազմապատկվում է քառ.մետրերով): Ավտոմատների այլ տեսակների համար համաթիվը 125 հազարից հասցվել է 185 հազար 500-ի (համաթիվը բազմապատկվում է ավտոմատների թվով):

«Դրամարկային գործառնությունների մասին» օրենքը նախատեսում է սահմանափակել կանխիկ վճարումները առևտրային գործարքներում մինչև 300 հազար դրամ՝ միանգամից, և 3 մլն դրամ մեկ ամսվա ընթացքում:

Նշված նորմի խախտման համար նախատեսվում է գումարի 5 տոկոսի չափով տուգանք, իսկ կրկնելու դեպքում՝ 10 տոկոս:

«Հարկերի մասին» օրենքի փոփոխությունները տուգանքներ են նախատեսում բիզնեսի վարման խախտումների համար: Ապօրինի ձեռնարկատիրության համար տուգանքը կազմելու է հասույթի 50-ապատիկը, բայց ոչ պակաս, քան 200 հազար դրամ: Նույն տարում կրկնության դեպքում՝ 100 տոկոս տուգանք, բայց ոչ պակաս քան 500 հազար դրամ: Հարտոնագրված գործունեության համար տուգանք՝ արտոնագրով նախատեսված գումարի 10-ապատիկի չափով, կրկնելու դեպքում՝ 20-ապատիկի:

Զգրանցված արտադրության եւ առանց համապատասխան փաստաթղթերի բեռնափոխադրումների համար նախատեսվում է տուգանք՝ ապրանքի արժեքի 50 տոկոսի չափով, իսկ կրկնակի եւ եռակի կրկնության դեպքում՝ 100-ապատիկի եւ 200-ապատիկի չափով:

Օդու ներմուծման մաքսը կնվազի, յուրաքանչյուր 250 հազար լիտրից այսօր գանձվում է 20 մլն դրամ, իսկ օրենքի ընդունումից հետո՝ 15 մլն:

28.11.2011  
news.am

### Փոքր բիզնեսի «մեծ աջակցությունը»

*«Փոքր բիզնես ստեղծելու ամենահեշտ ճանապարհը՝  
գնեք միջին բիզնես եւ զինվեք համերթությամբ...»  
Անհայտ հեղինակ*

Կիսահումորային այս աֆորիզմը տեղադրված էր ռուսական կայքերից մեկում: Հեղինակն անհայտ էր, անհայտ էր նաեւ ազգությունը: Սակայն, որտեղից էլ նա լինի, մի բան ակնհայտ է՝ հեղինակի հայրենի երկրում նույն վիճակն է, ինչ Հայաստանում: Այսինքն՝ բոլոր պայմանները ստեղծված են բիզնեսմենին... սնանկացման տանելու համար: Պարզապես ժամանակ է պետք:

Զնայած դրան, Հայաստանում բոլորը (հատկապես իշխանության ներկայացուցիչները) խոսում են փոքր ու միջին բիզնեսի աջակցության մասին:

Երեկ «Ա1+» հեռուստաընկերության ինտերնետային կայքում հաղորդում էր կազմակերպվել, որտեղ քննարկվում էր Հայաստանում փոքր ու միջին բիզնեսի վիճակը: Քննարկմանը մասնակցում էին նաեւ ՓՄՁ ոլորտի պետական պաշտոնյաներ: Այնպես ստացվեց, որ խոսակցությունը թեքվեց դեպի այն կողմ, որ փոքր ու միջին բիզնեսը չի դիմանում մեծ բիզնեսի հետ մրցակցությանը, եւ, օրինակ, մանր խանութները սնանկանում են՝ սնկի պես աճող սուպերմարկետների պատճառով:

Պետական պաշտոնյաները, ըստ էության, չհերքեցին, որ նման երեւոյթ իրոք գոյություն ունի: Փոխարենը փորձում էին դա ներկայացնել որպես շուկայական տնտեսությանը բնորոշ գործընթաց, որից պետք չէ վախենալ: Զուտ շուկայական տնտեսության առումով սա, իհարկէ, ճիշտ է: Դասական իմաստով՝ կատարյալ շուկայական տնտեսության մեջ պետությունն ընդհանրապես անելիք չունի: Տնտեսվարողները մրցակցում են, ոմանք ծաղկում են, ոմանք էլ՝ ձախողվում: Այսինքն՝ կատարյալ շուկան դաժան մրցապայքար է, որտեղ կամ շահում ես, կամ կործանվում: Կործանվելու դեպքում էլ ոչ ոք չի գա քեզ օգնության:

Սակայն նույն երկրներում, որտեղից սկիզբ առավ շուկայական տնտեսության՝ կապիտալիզմի գաղափարը, որոշ ժամանակ անց հասկացան, որ այդպես ճիշտ չէ: Թեկուզ բարոյական առումով: Այսինքն՝ չի կարելի թույլ տալ, որ ոմանք միլիարդների կարողություն կուտակեն, մյուսներն էլ լրիվ սնանկանան ու կործանվեն: Եվ պետությունը սկսեց միջամտել տնտեսությանը, որպեսզի թույլ չտա խիստ անհավասարություն ու բեւեռացում (քանի որ դա հղի է նաեւ քաղաքական վտանգներով): Օգտագործելով տարբեր գործիքներ, օրինակ, հարկաբյուջետային քաղաքականությունը, տարբերակված մոտեցումներ խոշոր եւ մանր բիզնեսի համար՝ պետությունը սատար է կանգնում փոքրերին, որ չկորչեն:

Իսկ մեզ մո՞տ ինչ է կատարվում: Երբ խոշոր բիզնեսը խժռում է փոքրին, դա ոչ մի օրենքի չի հակասում եւ լիովին տեղավորվում է շուկայական տնտեսության տրամաբանության մեջ: Այսինքն՝ մեր որոշ պաշտոնյաներ խորհուրդ են տալիս դրանից չնեղսրտել՝ հիշեցնելով, որ բոլոր երկրներում էլ այդպես է եղել, եւ ժամանակ է պետք, մինչեւ դաշտը կհստակեցվի, ամեն ինչ կընկնի իր տեղը: «Շուկայական տնտեսություն է, պարզապես Հայաստանում մարդանց մեծ մասն ունի դեռ խորհրդային մտածելակերպ եւ չի կարողանում հարմարվել շուկայի օրենքներին», - ասում են նրանք:

Այս ամենը, սակայն, ամենադասական ցինիզմ է: Նախ՝ մեզ մոտ շուկայական տնտեսություն գոյություն չունի. մեզ մոտ 20 տարի շարունակ դեռ դրա ձեւավորման սկզբնական փուլն է՝ իր ամենավատ դրսեւորումներով: Այսինքն՝ գործում է միայն միմյանց խժռելու, «գոռբայական» մեխանիզմը: Եվ երկրորդ՝ եթե նորմալ է, որ փոքր

բիզնեսը (այսինքն՝ միջին խավը) մրցակցությունը չդիմանալով՝ կուլ է գնում, եթե դա լրիվ համահունչ է շուկայական տնտեսության գաղափարին, ապա ո՞րն է պետության դերը այս ոլորտում:

Պետական պաշտոնյաների ամենասիրած արտահայտություններից մեկն էլ այն է, որ Հայաստանում մարդիկ չեն ցանկանում վճարել հարկերը: Դա ճիշտ է: Սակայն ճիշտ է նաև այն, որ անգամ աշխարհի ամենազարգացած երկրներում ոչ ոք սիրահոժար կերպով հարկ չի վճարում. բոլորն էլ դժվարությամբ են բաժանվում փողից: Պարզապես, եթե Արեւմուտքում հարկերից խուսափելու հիմնական պատճառը ազահոռությունն է, ապա Հայաստանում հարկերից խուսափելու ավելի լուրջ ու արդարացված պատճառներ կան: Նախ՝ դաշտն այնպիսին է, որ գրեթե բոլորն են թաքցնում իրական եկամուտները: Եվ եթե ինչ-որ մեկը շեղվի հաստատված խաղի կանոններից եւ փորձի լրիվ ազնիվ աշխատել, ապա, անկասկած, կսնանկանա: Եվ երկրորդ (ինչի մասին բազմիցս գրել ենք). Հայաստանում հարկատուն իրականում չգիտի, թե ո՞ւմ գրպանն են մտնելու իր վճարած հարկերը: Նորմալ երկրներում հարկերը ծախսվում են պետական կարիքների համար, մինչդեռ Հայաստանում դժվար է դրան հավատալ, երբ 100 հազար դրամ աշխատավարձ ստացող պետական պաշտոնյան իր պաշտոնավարման ընթացքում հանկարծ դառնում է միլիոնատեր:

Երբ ասում են՝ հարկային դրույքաչափերն իջեցրեք եւ հավասար պայմաններ ստեղծեք բոլորի համար՝ հնչում է հետեւյալ պատասխանը՝ բա բյուջեն ո՞նց պետք է հավաքվի: Սա, ի դեպ, անուղղակի խոստովանություն է, որ Հայաստանում ոչ թե բյուջեն է ծառայում տնտեսությանը, այլ տնտեսությունը՝ բյուջեին:

Իհարկե, որպես պատասխան՝ կարելի է բերել Վրաստանի օրինակը, որտեղ հարկային դրույքաչափերի եւ հարկատեսակների նվազումը բերեց հարկային մուտքերի աճի: Ավելին՝ շարունակելով ռեֆորմները, վրացիներն ավելի առաջ գնացին՝ իդեալական դաշտ ստեղծելով փոքր ու միջին բիզնեսի համար. Ներկայումս տարեկան մինչեւ 16 հազ. դոլար շրջանառություն ունեցող ընկերությունները գրեթե լիովին ազատվում են հարկերից: Մինչեւ 55 հազ. դոլար շրջանառություն ունեցող բիզնեսի համար ավելացված արժեքի հարկը սահմանվել է 3-5 տոկոս: ՏՏ ոլորտը համարյա ամբողջությամբ ազատվել է հարկերից՝ նրանց համար Վրաստանի ողջ տարածքը ազատ տնտեսական գոտի է:

Սակայն, երբ մեր պետական պաշտոնյաներին հիշեցնում են այդ մասին՝ անգիր արածի պես պատասխանում են. «Որովհետեւ ամերիկացիները վրացիներին օգնում են, մեծ դոտացիաներ են տրամադրում: Որ մեզ էլ այդքան փող տվող լինեք, մենք էլ այդ արդյունքը կունենայինք»: Այստեղից, իր հերթին, առաջ է գալիս հաջորդ հարցը՝ բա Հայաստանին ինչո՞ւ օգնող չկա: Օրինակ՝ ռուսներն ինչո՞ւ չեն օգնում: Եվ եթե ամերիկյան օգնությամբ կարելի է ավելի արագ զարգանալ, ինչո՞ւ ենք պինդ կպել Ռուսաստանից: Եվ ընդհանրապես, եթե բիզնեսի զարգացման հարցում ամենակարեւորը դրսից ստացված ֆինանսական միջոցներն են, էլ ինչո՞ւ են այդքան գումարներ ծախսվում տարբեր հայեցակարգերի ու ծրագրերի մշակման վրա:

Ընդհանրապես, երբ գրուցում են փոքր ու միջին բիզնեսի համար պատասխանատու պետական պաշտոնյաների հետ, այնպիսի տպավորություն են ստանում, որ նրանց հիմնական խնդիրը ոչ թե փոքր ու միջին բիզնեսին օգնելն է, այլ ապացուցելը, որ փոքր բիզնեսը օգնության կարիք չունի: Իսկ եթե փոքր բիզնեսն օգնության կարիք չունի, ապա փոքր ու միջին բիզնեսի աջակցության նպատակով ստեղծված կառույցների անհրաժեշտությունը՝ իրենց մեծաթիվ աշխատակազմերով, ընդհանրապես վերանում է: Այնպես որ, պետական բյուջեից նրանց հատկացվող գումարները հանգիստ խոճով կարելի է ուղղել խոշոր բիզնեսի աջակցության ծրագրերին:

Բաբկեն Թունյան  
19.11.2011  
168 ժամ

***Տիգրան Մարգարյանը եւ Քեթրին Էշթոնն արձանագրել են, որ ՀՀ-ԵՄ հարաբերությունները մտել են զարգացման նոր փուլ***

Հայաստանի վարչապետ Տիգրան Մարգարյանն ընդունել է տարածաշրջանային այցով Հայաստան ժամանած Եվրոպական միության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնին: «Վերջին շրջանում մեր հարաբերությունները Եվրոպական միության հետ մտել են զարգացման նոր փուլ: Դրա արդյունքում էլ մենք նոր թափ ենք հաղորդել մեր կողմից իրականացվող բարեփոխումներին», - ասել է վարչապետը՝ ողջունելով հյուրին կառավարությունում:

Կառավարության մամուլի ծառայությունից news.am-ին հայտնում են, որ Քեթրին Էշթոնը գոհունակություն է հայտնել Հայաստան-ԵՄ հարաբերությունների զարգացման ընթացքից: Եվրոպական միության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչն ասել է, որ քաջ գիտակցում է, թե ինչ ծավալի աշխատանք է իրականացնում Հայաստանը ԵՄ-ի հետ Խորը եւ համապարփակ ազատ առևտրի եւ Ասոցացման համաձայնագրերի ուղղությամբ: Նշելով, որ տպավորված են տարբեր ուղղություններում Հայաստանի ձեռք բերած առաջընթացով՝ Քեթրին Էշթոնն ընդգծել է, որ կան բոլոր նախադրյալները՝ ՀՀ-ԵՄ հարաբերությունների սավելի խորացման եւ սերտացման համար: «Մենք պատրաստ

ենք օգնել Հայաստանին տնտեսական առաջընթացի ապահովման համար, որին էապես կարող է նպաստել Խորը եւ համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումը, որի շուրջ բանակցությունների գործընթացն առաջիկայում կմտնի նոր փուլ»,- ընդգծել է Քեթրին Էշթոնը:

Այնուհետև, Տիգրան Սարգսյանը Քեթրին Էշթոնին է ներկայացրել կառավարության առաջնահերթությունները եւ իրականացվող աշխատանքների ընթացքը՝ մեր երկրում միջին խավի եւ քաղաքացիական հասարակության ձեռավորման, եվրոպական արժեքների ներդրման ուղղությամբ:

17.11.2011  
news.am

***Արդյունաբերության զարգացման նոր ծրագիրը պետք է ժամանակին ներկայացվի հասարակությանը. վարչապետ***

Արդյունաբերության զարգացման նոր ծրագիրը, որի մասին բարձրաձայնել է երկրի նախագահը, պետք է ժամանակին ներկայացվի հասարակությանը: Այս մասին, այսօր՝ նոյեմբերի 16-ին, ԱԾ-ում բրիֆինգի ժամանակ հայտարարել է վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Հիշեցնենք, որ մի քանի օր առաջ, Արդյունաբերողների ու գործարարների միության համագումարի ժամանակ, Սերժ Սարգսյանը հայտարարել էր, որ շուտով հասարակությանը կներկայացվի արդյունաբերության զարգացման նոր ծրագիրը, որը շատ կարեւոր է երկրի տնտեսության համար:

Այսօր Տիգրան Սարգսյանը նշեց, որ այդ ծրագրի մանրամասները բացահայտելը դեռ շուտ է, սակայն սահմանված ժամանակին այն անպայման կներկայացվի հասարակության ուշադրությանը:

«Ինչ վերաբերում է դրա ճյուղային ուղղություններին, ապա այն համապատասխանում է տնտեսության ճյուղային առաջնահերթություններին»,- ընդգծեց նա:

16.11.2011  
news.am

***Հաշտում ՊԵԿ ղեկավարին. Հասարակական տրանսպորտի կեսը ստվերում է***

Հասարակական տրանսպորտի ոլորտում օրական 75 հազ. դոլարից ավելի հասույթ է ստացվում, որի մոտ կեսը ստվերում է: Այդ մասին այսօր՝ նոյեմբերի 16-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Սպառողների ասոցիացիայի նախագահ Արսեն Պողոսյանը: Ավելին՝ նրա կարծիքով ամենաշատ ստվեր հենց այս դաշտում է:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետեկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանը բյուջետային քննարկումների ընթացքում հանրությանն ու մասնագետներին խնդրել էր նշել, թե հատկապես որ ոլորտներում է ստվերը՝ հարկային պլանի ավելացված 101 մլրդ դրամը 2012 թ. ապահովելու համար: Ա. Պողոսյանի այս հայտարարությունը կարելի է նաեւ համարել հուշում ՊԵԿ նախագահին:

Նշենք, որ ավտոտրանսպորտային գործունեությունը Հայաստանում հարկվում է հաստատագրված հարկերով: Միկրոավտոբուսի (17 նստատեղ) հաստատագրված ամսական վճարը կազմում է մոտ 44 հազ. դրամ:

16.11.2011  
news.am

***«Մեր ձայնը լսելի է դարձել». Գործարարները համագումար են անում***

Կառավարության նիստերի դահլիճում մեկնարկել է Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության 6-րդ համագումարը, որին ներկա էր նաև Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Մինչ համագումարի մեկնարկը միության նախագահ Արսեն Ղազարյանը լրագրողների հետ ճեպագրույցում անդրադառնալով Հայաստանի տնտեսական ձեռքբերումներին, ասել է. «Մեր հիմնական ձեռքբերումն այն է, որ մենք հարթակ ենք ստացել միմյանց հետ խոսելու, միմյանց հասկանալու: Մեր ձայնը լսելի է դարձել, կարողանում ենք շահերը ձևավորել, համախմբել և ներկայացնել պատկան կառույցներին»:

Ղազարյանի խոսքով, իրենց միությունը համագործակցում է պետության հետ, աջակցում բարեփոխումների իրականացման գործում՝ «ի շահ Հայաստանի տնտեսության բարգավաճման, ի շահ սոցիալական արդարության»:

«Ընդհանրապես, բիզնեսով զբաղվելը դյուրին գործ չէ, մեզ մոտ կրկնակի դժվար է, քանի որ մենք ակտիվ ենք, մրցակցային դաշտը կրկնակի թեժ է: Խնդիրներ ունենք կառավարման համակարգում բիզնեսի բարենպաստ դաշտի կատարելագործման հարցում, կոռուպցիայի մակարդակի իջեցման ու ստվերային տնտեսության հարցում: Բայց մենք տեսնում ենք բարեփոխումների ընթացքը, կա հստակ քաղաքական կամք, որ մեզ համախմբում է: Սա է որ մեր շուկայում զարգանալու և դրսի շուկաները գրավելու ցանկություն ու մղում է տալիս», -հավելել է Արսեն Ղազարյանը:

Փոքր եւ միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման խորհրդի երկրորդ նիստը երեկ տեղի ունեցավ կառավարությունում: Դիմելով ներկաներին՝ խորհրդի նախագահ, վարչապետ Տիգրան Մարգարյանն անդրադարձել է հարկային փոփոխությունների փաթեթին: Նրա հավաստմամբ, փաթեթի տրամաբանությունն է հնարավորին չափ բարելավել միջավայրը փոքր եւ միջին բիզնեսի համար եւ հարկային բեռը տեղափոխել այն ոլորտներ, որտեղ կան ավելի բարձր եկամուտներ:

Մասնավորապես, եկամտահարկի սանդղակում 10 տոկոս եւ 20 տոկոս շեմից բացի, սահմանվելու է նոր՝ 25 տոկոս շեմ, որը պետք է վճարեն այն ֆիզիկական անձինք, ովքեր ստանում են 2 միլիոն դրամից ավելի եկամուտ: Երկրորդը ալկոհոլային խմիչքների հարկման դաշտի հավասարեցումն է արտադրողների եւ ներմուծողների համար, քանի որ «եթե մենք մեզ թույլ տանք անհավասար մոտեցում, ապա մեր գործընկերները պետությունները նույնպես կարող են իրենց դա թույլ տալ»: Միեւնույն ժամանակ, ավելացվում են հարկերն էլիտար խմիչքների վրա եւ 50 տոկոսով՝ օդու արժեքային դրույքաչափը՝ ներքին շեմը թողնելով անփոփոխ 500դրամ: Ըստ վարչապետի, իրականում այս փոփոխությունը մեր արտադրողների համար ավելի բարենպաստ պայման կստեղծի, որովհետեւ նրանք գնային առումով ավելի լավ վիճակում են հայտնվում, իսկ թանկ օդիներից լրացուցիչ բյուջե կմտնի 2 միլիարդ դրամ:

Տիգրան Մարգարյանի մատնանշած երրորդ կարեւոր փոփոխությունը շքեղության հարկն է՝ 90 հազար դոլարից ավելի բարձր գին ունեցող մեքենաների մաքսային արժեքի նկատմամբ դրույքաչափը կբարձրացնա 20 տոկոսով: Չորրորդը՝ խաղատների, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման համար նախատեսված հաստատագրված վճարները կավելանան 50 տոկոսով՝ ակնկալելով 2 միլիարդ դրամ լրացուցիչ եկամուտ:

Միաժամանակ, փոքր եւ միջին բիզնեսի համար ընդլայնվում են արտոնագրային վճարների դաշտում գործունեության տեսակները, ընդգրկելով հանրային սնունդը, հյուրանոցային տնտեսությունները, թեթեւ մարդատար մեքենաներով ուղեւորափոխադրումներ իրականացնողներին, վարսավիրանոցները, ավտոտեխնապատրաստման կայանները, ավտոկանգառները, բիլիարդ խաղերի կազմակերպումը: Փոքր եւ միջին բիզնեսին վերաբերող հաջորդ կարեւոր փոփոխությունը հարկային գերավճարներն այլ պարտավորությունների դիմաց առանց ուսումնասիրման եւ ստուգումների հաշվանցման հնարավորության տրամադրումն է: Բացի դրանից, պետության կողմից գերավճարների վերադարձման տույժ տուգանքները չեն դիտարկվելու որպես եկամուտ բիզնեսի համար եւ չեն հարկվելու:

«Այս փաթեթով վերացվում է նաեւ հասույթների գրանցման գիրքը, որը մշտական դժգոհությունների առարկա էր: Էապես պարզեցվում է նաեւ առաքման դեպքերի բովանդակությունը՝ պակասեցվում է լրացվող տողերի քանակը եւ այլն», նշել է վարչապետը: Նա տեղեկացրել է, որ ի տարբերություն փոքր եւ միջին բիզնեսի, խստացնելու են պահանջները խոշոր բիզնեսի նկատմամբ, որը զբաղվում է մեծածավալ ներկրումներով, սակայն չի ապահովում փաստաթղթաշրջանառությունը: Հանքաքարի, սեւ եւ գունավոր մետաղների ջարդոնների, ինչպես նաեւ փայտանյութի արտահանման նկատմամբ սահմանվելու են պարտադիր վճարներ, որոնց նպատակն է վերջիններիս վերամշակումը կազմակերպել Հայաստանում, այլ ոչ թե արտերկրում:

Առանց հաշվարկային փաստաթղթերի ապրանքների տեղաշարժի պարագայում պատասխանատվության միջոցները նույնպես խստացվելու են: Խոսքն ամսական 15 միլիոն դրամից ավելի իրացման շրջանառություն ունեցող խոշոր հարկ վճարողների մասին է: Ներդրվելու են նորմեր, որոնք պարտադրում են, որ խոշոր գործարքները լինեն անպայման անկանխիկ:

Գործարարների երկու առաջարկ կյանքի է կոչվել

Փոքր եւ միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման խորհրդի երեկ տեղի ունեցած նիստի մասին լրագրողներին տեղեկություններ հաղորդեց խորհրդի անդամ, «Գործարար շահերի պաշտպանության ցանցի» համակարգող Գագիկ Պողոսյանը: Նա հայտնեց, որ նախորդ նիստից մինչ այս նիստը ընկած ժամանակահատվածում լուծվել են գործարարների բարձրացրած խնդիրներից երկուսը: Առաջինը՝ ձեռնարկությունների գրանցման ժամանակ արդեն տրամադրվում է նաեւ սոցվճարի համարը, որը մինչ այդ տրվում էր սոցիալական ծառայության կողմից: Երկրորդը՝ անշարժ գույքի վարձակալության գործարքի հեշտացումն ու ծախսերի նվազեցումն է: 2012-ի հունվարի 1-ից, տարածքի վարձակալման գործարքը ձեռներեցը կարող է կնքել կադաստրում՝ առանց նոտարական վավերացման, իսկ վճարը կլինի միասնական:

Գագիկ Պողոսյանը տեղեկացրեց նաեւ, որ նիստի ժամանակ առաջադրվել են այլ հարցեր: Մասնավորապես առաջարկվել է ներմուծվող եւ տեղում արտադրվող նույն ապրանքների դեպքում տեղական արտադրանքի համար որոշակի նպաստավոր պայմաններ ստեղծել: Ըստ վերոնշյալ կազմակերպության ղեկավարի՝ այստեղ հարկ է նկատի ունենալ Առեւտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) պահանջները եւ չստեղծել անհավասար պայմաններ ներմուծողների համար, բայց կան երկրներ, որոնք ԱՀԿ սկզբունքներով մեզ հետ չեն առաջնորդվում, եւ մենք էլ կարող ենք նրանց նկատմամբ նույն կերպ վարվել: Գագիկ Պողոսյանը որպես օրինակ բերեց Թուրքիան եւ թուրքական ապրանքները:

Արա Մարտիրոսյան

**Ինչ հարկային փոփոխություններ են սպասվում հաջորդ տարի. ներկայացնում է վարչապետը**

Բիզնես ոլորտում 2012 թ. կվերացվի հասույթների գրանցման գիրքը, ՀՀ Ազգային ժողովում բյուջետային քննարկումների ընթացքում հայտարարեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Նրա խոսքով՝ էապես կպարզեցվեն առաքման գրքերի վարման կարգը, կկրճատվի առաքման գրքերում անհրաժեշտ գրառումների ծավալը: «Միեւնույն ժամանակ իրականացնելով այսպիսի թեթեւացումներ փոքր բիզնեսի համար՝ մենք էապես շեշտադրումները տեղափոխում ենք դեպի խոշոր բիզնես, խստացնում ենք պատժամիջոցները խոշոր բիզնեսի համար», - հայտարարեց Տ. Սարգսյանը: Մասնավորապես՝ բանկերն այլևս հնարավորություն չեն ունենա ինքնուրույն վերագնահատել իրենց հիմնական միջոցները, որը հնարավորություն էր տալիս նվազեցնել շահութահարկի բազան:

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ**

*Սույն տեղեկագրի թողարկումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ Ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի , և ԱՄՆ բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ: Տեղեկագրի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են Օտարերկրյա Ներդրումների և Համագործակցության Ասոցիացիային, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ Ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:*